Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Լեզվական գրագիտություն կարողունակության զարգացումը ֆիզիկա առարկայի դասավանդման ընթացքում
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	• Լիլիթ Ռաֆայելի Դանիելյան • Քիմիայի ուսուցչուհի • Հեռ. 043-15 95 63 • Էլ. Հասցե՝ danielyanl397@gmail.com • Քիմիա • 10-12-րդ դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	• ՀՀ ԿԳՄՍՆ Նոր Հաճնի ավագ դպրոց ՊՈԱԿ • 0224 4 3046,091717299 • norhajen2@schools.am, karine_76@mail.ru • https://norhachnh.schoolsite.am/

Բովանդակություն

Հետազոտական աշխատանք	**1**
Բովանդակություն	**2**
Ներածություն	**3- 4**
Հիմնական բովանդակություն	**5-15**
Եզրակացություններ, առաջարկություններ	**15-16**
Օգտագործված գրականության ցանկ	**17**

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	• Աշակերտների մոտ զարգացնել բանավոր և գրավոր խոսք ,մտածելու, ըմբռնելու, ստեղծելու, մեկնաբանելու հմտություններ: • Արդյոք կնպաստի լեզվական գրագիտությունը <<Քիմիայի զարգացման պատմությունը >> թեման յուրացնելիս
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարող ունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Նպատակի ուսումնասիրությունը ուղված է հետևյալ կոմպետենցիաներին • Լեզվական գրագիտություն և կարողունակություն • Սովորել սովորելու կարողունակություն • Թվային և մեդիա կարողունակություն • Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	10 -րդ պատմական և լեզվական հոսքերի բոլոր աշակերտները–31 աղջիկներ–21 տղաներ–10

Ներածություն

Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Ինդուկտիվ, գիտական ,համեմատական
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	3.09.2023-25.09.2023

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	• Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: • Կարողունակությունը անհատի համալիր բնութագրիչ է. այն գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների համակարգ է, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծելու որոշակի խնդիրներ: Կարողունակությունը նշված բոլոր չորս որակների համատեղ առկայությունն է և դրանցից որևէ մեկի բացակայությունը թույլ չի տալիս սովորողին կամ քաղաքացուն հաջողությամբ լուծելու իր առջև ծառացած խնդիրները: Կարողունակությունը չի կարելի համարել վերջնականորեն ձևավորված որևէ արդյունք: Վերջինիս ձևավորումն անընդհատ գործընթաց է, որի ժամանակ այն անընդհատ կարող են կատարելագործվել: Կարողունակությունների ձևավորումը սկսում է վաղ մանկությունից և շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում: • Միջնակարգ կրթության կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից: • Հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են

կարողունակությունների ձևավորմանը:

- Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված ութ կարողունակություններից է <<Լեզվական գրագիտությունը և կարողունակությունը>>: Հանրակրթական պետական չափորոշչում լեզվական գրագիտությունը և կարողունակությունը ներկայացվում է՝
- «Սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով և այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Նրանք կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Ընդհանուր գրագիտությունը կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը (բաղաքացիական, բնապահպանական, տնտեսական, ֆինանսական, իրավական, առողջապահական, գիտատեխնիկական, թվային և այլն): Սովորողներն ընդունակ են բանավոր և գրավոր ձևերով ճանաչել, ընբռնել, արտահայտել, ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաների և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային նյութեր»:
- Լեզվական գրագիտության խնդիրը օրեցօր ավելի ու ավելի առաջնահերթ է դառնում: Լեզվական գրագիտությունը համապիտանի կարողունակություն է: Այն լիարժեք դրսևորվում է ոչ միայն բոլոր առարկաների ուսումնական գործընթացում, այլև մեր հասարակության բոլոր ոլորտներում: Շատ հաճախ բազմաթիվ թյուրըմբռնումներ են առաջանում լեզվի ոչ գրագետ կիրառության պատճառով: Լեզվական գրագիտությունը պահանջում է և՛ այնպիսի բառապաշար, որ բառիմաստի շփոթություններ չառաջանան, և՛ պատկերավոր խոսքի տիրապետում՝ լսարան գրավելու և խոսքը ճիշտ տեղ հասցնելու համար, և՛ փաստարկված, հիմնավորված դիրքորոշման դրսևորում՝ ասելիքը անառարկելի մատուցելու կամ առողջ քննարկման դնելու նպատակով:

Հիմնական բովանդակություն	Լեզվական գրագիտության և կարողունակության նկարագրիչները՝ • Գիտելիք • Ճանաչի և գործածի մենիմաստ և բազմիմաստ բառեր, նրանց ուղիղ և փոխաբերական իմաստները: • Ձևափոխի (հոլով, հոդ, թիվ, խոնարհում) խոսքի մասերը և նախադասության անդամները կանոններին համապատասխան, ըստ անհրաժեշտության և ճիշտ ձևափոխություններով կիրառի խոսքում: • Հմտություն՝ • Կարդա ուղղախոսական կանոններին համապատասխան: • Գրի ուղղագրական կանոններին համապատասխան: • Խոսի ուղղախոսական կանոններին համապատասխան: • Նորովի վերարտադրի լսածը, ընթերցածը, դիտածը: • Ստեղծի բանավոր և գրավոր պատկերավոր խոսք /առանձին և խմբային/, արձակ և չափածո պատմություններ՝ օգտագործելով տարաբնույթ նշաններ /կոմիքս, էմոջի, ծաղրանկար և այլն/: • Սկսի, շարունակի և ավարտի պատմությունը, զարգացնի այն՝ շարունակելով հերսից կամ վերջից: • Ստեղծի տարաբնույթ ուսումնական ցուցադրական նյութեր՝ պաստառ, գրքույկ, ուղեցույց, սահիկաշար, անիմացիա, տեսանյութ և այլն: • Պատմի լսածի, տեսածի, զգացածի մասին, նկարագրի մարդկանց, երևույթներ, առարկաներ, դեպքեր, իրադարձություններ: • Ընթերցի տեքստը պահանջվող հնչերանգով, վերարտադրի, հարցեր առաջադրի, պատասխանի դրանց, մեկնաբանի, փոխանցի զգացողություններ, ակնհայտ գաղափար: • Ելույթ ունենա լսարանի առջև ազատ, անկաշկանդ, գրագետ՝ օգտագործելով համապատասխան կառույցներ և բառապաշար: Դիրքորոշում/արժեք՝ • Համագործակցի ընկերների հետ՝ պաշտպանելով սեփական տեսակետն ու դիրքորոշումը:

Հիմնական բովանդակություն	
	• Գրավոր և բանավոր խոսքում իր վերաբերմունքն արտահայտի տեքստի, իրադրության, խոսքի նկատմամբ: • Հաղորդակցվելիս հարգալից վերաբերմունք դրսևորի հասակակիցների և այլոց նկատմամբ, լինի պատասխանատու, շրջահայաց, հանդուրժող: • Արժևորի մայրենի լեզվի դերը հասկանալի դառնալու և մտքերը տեղ հասցնելու գործում: • Հասկանա և գնահատի մայրենի լեզուն՝ որպես սեփական անձի ձևավորման և ինքնահաստատման կարևոր գործոն: • Արժևորի այլոց իրավունքները ու դիրքորոշումը: • Կատարի թարգմանություններ և արժևորի մայրենի լեզվի բառակազմական հնարավորությունները ու բերականական ճկունությունը թարգմանական գրականության մեջ: Միջնակարգ կրթության աստիճանում չանտեսելով տարիքային առանձնահատկությունները՝ կարևոր է զարգացնել բնական մտածողությունը, որովհետև.այս տարիքում դեռահասը սիրում է ամեն ինչին բնադատաբար վերաբերվել, և դասաժամին նրան տրվում է այդ հնարավորությունը,գիտական աշխարհը նոր-նոր է բացահայտվում նրա համար, և հարցերով բացահայտելու հնարավորությունը հասկացման լավագույն ճանապարհներից է,այս տարիքը մեծ պահանջ ունի շփման, և խմբերով աշխատանքը, որտեղ ոչ թե նա պարզապես պնդում է իրենը, այլ լսում է դիմացինի կարծիքը, հակափաստարկներ է հավաքում, համոզում և փաստերով հիմնավորում է իր իմացածն ու հասկացածը, մարդկային ավելի ազատ շփումների տիրապետելու հրաշալի դպրոց է. <<համոզի՛ր, որ դու ճիշտ ես>>ճշմարտությունն ինքնուրույն բացահայտելուհնարավորությունը բարձրացնում է դեռահասի ինքնագնահատականը, որի պահանջը նա այնքա՜ն ունի: • Եվ այս ամենի արդյունքում ինքնուրույն և համարձակ քաղաքացիներ են ձևավորվում, որոնք չեն վախենում որոշումներ կայացնելուց և սեփական կարծիքը բարձրաձայն հայտնելուց: • Հանրակրթական միջնակարգ ծրագրի շրջանավարտի ուսումնառության արդյունքում լեզվական կարողունակության ձևավորման

Հիմնական բովանդակություն	ակնկալվող վերջնարդյունքները ըստ հանրակրթության պետական չափորոշիչի • գրական հայերենով ստեղծի տարբեր ոճերի և ժանրերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին. • առաջադրի հետազոտական հարցադրումներ և վարկածներ, պլանավորի և իրականացնի հետազոտություններ՝ առաջարկելով համապատասխան մեթոդներ և բարելավման եղանակներ: Վերլուծի ստացված տվյալները առկա գիտելիքի և պատկերացումների համատեքստում, կատարի վերացարկումներ և ընդհանրացումներ. • կիրառի համալիր գիտելիք և անհրաժեշտ հմտություններ՝ տեխնոլոգիական զարգացման և տեղեկատվության բազմազանության պայմաններում կողմնորոշվելու համար. • ուրիշների հետ համագործակցելով և ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր՝ ձեռք բերած գիտելիքը կամ գործնական արդյունքը ներկայացնելով տարբեր միջոցներով. • արդյունավետ օգտագործի կոնֆլիկտին միջամտելու և լուծելու տարբեր մեթոդներ, պատրաստակամ լինի ապրումակցել և աջակցել դժվար իրավիճակում հայտնված ցանկացած մարդու • վերահսկի իր զգացմունքները և ցանկությունները, իր առջև դնի նպատակներ, մշակի դրանց հասնելու ուղիներ և լինի հետևողական. • կիրառի իր կրթական և աշխատանքային հնարավորությունները ինքնուրույն գործունեություն ծավալելու համար, ուսումնասիրի և գնահատի իր՝ տարբեր մասնագիտությունների համար անհրաժեշտ գիտելիքներն ու կարողունակությունները, պատճառաբանված ընտրություն կատարի. • վերլուծի և գիտակցի տարբեր գործոնների ազդեցությունն իր անձի ձևավորման վրա:

Հիմնական բովանդակություն

Հետազոտության ընթացքը	<<Լեզվական գրագիտություն>> կարողունակությունները փորձել եմ զարգացնել <<Քիմիայի զարգացման պատմությունը>> թեման ուսումնասիրելիս: (10 -րդ պատմական և լեզվական հոսքերում):Թեմային հատկացրել եմ հինգ դասաժամ: Առաջին դասաժամին կարճ դասախոսության միջոցով համառոտ ներկայացրել եմ քիմիա գիտության և նրա զարգացման պատմության մասին՝օգտագործելով լրացուցիչ տեղեկություններ:Այնուհետև դասարանը բաժանել եմ երեք խմբերի կիրառելով<<Խճանկար>> մեթոդը յուրաքանչյուր խմբի հանձնարարել եմ տրված ժամանակահատվածում ընթերցել տեքստից տրված հատվածը: Այն լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց հատվածը՝ կարդում են, բացատրում կարևոր գաղափարները, թե ինչ զարգացման փուլերով է անցել քիմիա գիտության պատմությունը սկսած մ.թ.ա մինչև 20 -րդ դարը :Յուրաքանչյուր խումբ սովորում է դասի մեկ հատվածը, բայց արդյունքում սովորում են ամբողջ դասը՝ փոխանակում են տեղեկություններ, ինչպես նաև զարգացնում լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Այնուհետև հետադարձ կապ կատարելու նպատակով խմբերին հանձնարարում եմ հինգ բոպեանոց ազատ շարադրանք՝ոչ իր խմբի հանձնարարված տեքստից,նպատակ ունեմ ստուգելու թե որքանով են խմբերը ուշադիր եղել և որքանով են նրանց մոտ զարգացած լսողական հիշողությունը:Այնուհետև որպես տնային աշխատանք հանձնարարում եմ գրել փոքրիկ շարադրություն <<Քիմիան ու նրա նշանակությունը հնադարյան քաղաքակրթության մեջ >> թեմայով: Երկրորդ դասաժամին տնային աշխատանքը ստուգելուց հետո անցել եմ նոր դասի հաղորդմանը , թեման՝ << Ատոմների և մոլեկուլների մասին պատկերացումների զարգացումը>>:Մտագրոհ մեթոդով ՝օգտագործելով <<ատոմ >> և << մոլեկուլ >> բառերը աշակերտները մեկ բնութագրական բառով գրում են գրատախտակին , այնուհետև գրած բառերով կազմում են նախադասություններ:Այնուհետև դասարանը բաժանում եմ չորս խմբերի, երկու խմբին հանձնարարում եմ ատոմի մասին շարադրանքը,մյուս երկու խմբին մոլեկուլի մասին շարադրանքը:Տրվել է տաս բոպե , այնուհետև

	խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը, խումբը լրացնում է մյուս խմբին՝նշելով բացթողումները:Ամբողջը ինարկելուց հետո անդրադարձ կատարելու նպատակով կիրառում եմ <<Վիեննի դիագրամ >> մեթոդը ատոմ և մոլեկուլ բառերով՝նշելով նրանց նմանություններն ու տարբերությունները:Նպատակը այն է թե որքանով են խմբերը լսել ու որքանով կարող են գրագետ գրավոր խոսքով ներկայացնել : Երրորդ դասաժամին թեման ՝<< Քիմիական տարր և քիմիական նշաններ>>:Կարճ դասախոսության միջոցով ներկայացնում եմ քիմիական տարրերը , հաշվի առնելով որ նշված թեման անցել են յոթերորդ դասարանում : Այնուհետև հանձնարարում եմ <<՝Ինչ գիտեին, ինչ են ուզում իմանալ,ինչ սովորեցին>> մեթոդով կարդալ դասը, լրացնել աղյուսակը:Այնուհետև հանձնարարում եմ տնային առաջադրանք միջառարկայական կապ ստեղծելով հայոց լեզվի հետ՝ներկայացնել տաս տառ, կազմել դրանցով բառեր, իսկ բառերով կազմել նախադասություններ:Այնուհետև գրել տաս քիմիական տարր, կազմել բանաձևեր, դրանցով ներկայացնել ռեակցիաների հավասարումներ: Չորրորդ դասաժամին թեման ՝<< Քիմիայի հիմնական օրենքները>>:Դասը սկսվում է տնային առաջադրանքի ստուգմամբ:Այս թեմայում ընդգրկված են քիմիայի երեք հիմնական օրենքներ՝զանգվածի պահպանման օրենքը,նյութի բաղադրության հաստատունության օրենքը, Ավոգադրոյի օրենքը:Դասարանը բաժանում եմ երեք խմբի, <<Խճանկար>> մեթոդով յուրաքանչյուր խմբին հանձնարարում եմ ներկայացնել մեկ օրենք :Նպատակն այն է,որ սովորողի գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները՝ խոսքը, հիշողությունը, երևակայությունը: Հինգերորդ դասաժամը ամփոփման դասաժամն է:Դասարանը բաժանում եմ չորս խմբի՝ներկայացնելով կենտրոնների աշխատանքը:Առաջին խումբը բացահայտողների կենտրոնն է,որոնք իրենց անցած թեմաների միջև փորձում են գտնել ընդհանրություններ և ներկայացնել:Երկրորդ խումբը հետազոտողների կենտրոնն է,որոնք ուսումնասիրելով թեմաները պիտի ներկայացնեն քիմիայի զարգացման ուղիները:Երրորդ խումբը ստեղծագործողների կենտրոնն է, այդ թեմաների հիման վրա պաստառ են պատրաստում :Չորրորդ խումբը գրավոր աշխատանքների կենտրոնն է, որոնք օգտվելով այդ միջոցներից ազատ շարադրանք են

Հիմնական բովանդակություն	
	ներկայացնում:Խմբերին տրվում է քսան րոպե ժամանակ, որից հետո յուրաքանչյուր կենտրոն ներկայացնում է իր աշխատանքը:ներկայացնելուց հետո խմբերին հանձնարարում եմ գնահատել իրենց գիտելիքները <<Վարդ, կոկոն, փուշ>> գնահատման մեթոդով:Խմբերի ինքնագնահատումից պարզ է դառնում ,թե ով ինչքանով է յուրացրել թեման, ձևավորող գնահատական տալուց հետո անցնում եմ միավորային գնահատմանը:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Եզրակացություն Հիմք ընդունելով հետազոտական աշխատանքում ներկայացված ուսումնասիրությունները եկել եմ հետևյալ եզրակացության Լեզվական կարողունակությունները ու գրագիտությունը կարելի է հնարավորինս ի դերև հանել ֆիմիայի դասաժամերին, երբ ճիշտ է պլանավորվում դասաժամը և հաշվի են առնվում աշակերտների հնարավորությունները:Կարևոր է նաև ֆիմիայի յուրաքանչյուր թեմայի համապատասխան մեթոդի ընտրությունը:Ուշադրության կենտրոնում են եղել անբավարար պայմանների կարիք ունեցող այն աշակերտները, որոնց առաջադրանքները խմբում բաժանելիսես ուղղորդել եմ , իսկ անհատական հարցման դեպքում հաշվի եմ առել հնարավորությունները, նույն կերպ եմ վարվել նաև այն աշակերտների հետ, ովքեր ընդունակ են և նրանց նկատմամբ ևս անհատական մոտեցում է ցուցաբերվել:
Այլ տեղեկատվություն	• Թեման անցնելիս կիրառել ենք հետևյալ մեթոդները՝ • Մտագրոհ, Խնանկար, Ազատշարադրանք,Վիենի դիագրամ,Կենտրոններով աշխատանք,Ինքնագնահատում, Խմբերով միմյանց գնահատում, <<Վարդ, կոկոն, փուշ>>:

Օգտագործված գրականության ցանկ

https://lib.armedu.am/article/946

https://lib.armedu.am/files/resource/files/2022-06-24/5d8195dc7c7056844d3df55aa8e58469.pdf

https://marysargsyan.home.blog/ դասավանդման մեթոդիկա

10-դասարանի դասագիրք/ հումանիտար հոսք/

Հավելվածն
եր